



«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Մամլո հաղորդագրություն

4 ապրիլի, 2012, Երևան

Հայաստանը ցանցային պատրաստվածությամբ աշխարհում բարելավել է իր դիրքը 15 տեղով՝ զբաղեցնելով 94-րդ հորիզոնականը

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը՝ որպես Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՋՏՖ) Համաշխարհային մրցունակության կենտրոնի գործընկեր կազմակերպություն Հայաստանում, ներկայացնում է ՋՏՖ կողմից հրապարակվող «Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային զեկույց 2012»-ի հիմնական արդյունքները:

Չեկույցի հիմքում ընկած է **ցանցային պատրաստվածության համաթիվը**, որը ցույց է տալիս երկրների տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումներին մասնակցելու և դրանցից օգտվելու պատրաստվածության աստիճանը, ինչն էլ նպաստում է մրցունակության բարձրացմանը:

Այս տարի զեկույցը գնահատել է աշխարհում 142 տնտեսությունների ՏՏ մրցունակությունը՝ ընդգրկված երկրների քանակն ավելացնելով չորսով:

Երկամյա վերանայման արդյունքում ցանցային պատրաստվածության համաթիվը կրել է որոշակի մեթոդաբանական փոփոխություններ. համաթիվն ավելացել է ևս մեկ՝ ազդեցության բաղադրիչ: Վերջինս գնահատում է ՏՏՏ ոլորտից բխող համընդհանուր այն տնտեսական և սոցիալական ազդեցությունները, որոնք խթանում են մրցունակության և բարեկեցության բարձրացումը:

ՋՏՖ-ի գնահատականներով Շվեդիան, Սինգապուրը և Ֆինլանդիան շարունակում են առաջատար դիրքեր զբաղեցնել ցանցային պատրաստվածության վարկանիշով՝ բարելավելով իրենց գնահատականը նախորդ տարվա համեմատ: Եական բարելավում են արձանագրել Նիդեռլանդները և Մեծ Բրիտանիան՝ առաջադիմելով 5 հորիզոնականով և հայտնվելով համապատասխանաբար 6-րդ և 10-րդ դիրքերում: Վարկանիշային առաջին հնգյակը եզրափակում են Դանիան և Շվեյցարիան (համապատասխանաբար 4-րդ և 5-րդ դիրքերով), մինչդեռ ԱՄՆ-ը զիջել է իր դիրքերը՝ 5-րդից հայտնվելով 8-րդ դիրքում:



Հայաստանը ցանցային պատրաստվածության ցուցիչով աշխարհում 94-րդն է 142 երկրների շարքում՝ Նախորդ տարվա համեմատությամբ 15 տեղով իր դիրքի բարելավման և ընդհանուր միավորի 8%-անոց աճի շնորհիվ:

Ընդհանուր առմամբ, Նախորդ տարվա համեմատ աճ է գրանցվել համաթվի 3 բաղադրիչների գծով (ազդեցության բաղադրիչը նոր է): Եական բարելավում է գրանցվել հատկապես օգտագործման բաղադրիչում (+22 կետ): Հայաստանի, ԱՊՅ երկրների և Վրաստանի ցանցային պատրաստվածության համաթվի և բաղադրիչների դինամիկան ներկայացված են ստորև.

	Ցանցային պատրաստվածություն		Միջավայրի բաղադրիչ		Պատրաստվածության բաղադրիչ		Օգտագործման բաղադրիչ		Ազդեցության բաղադրիչ
	2012 վարկանիշ	Փոփոխ. +/-	2012 վարկանիշ	Փոփոխ. +/-	2012 վարկանիշ	Փոփոխ. +/-	2012 վարկանիշ	Փոփոխ. +/-	2012 վարկանիշ
Ղազախստան	55	+12	81	+6	52	+4	65	-9	49
Ռուսաստան	56	+21	100	-17	32	+36	60	+9	73
Ադրբեջան	61	+9	77	0	61	-12	57	+17	70
Ուկրաինա	75	+15	117	-19	33	+49	84	+2	75
Վրաստան	88	+10	74	+12	93	+14	94	-2	87
Հայաստան	94	+15	110	+4	90	+7	89	+22	99
Տաջիկստան	114	-2	87	+36	115	-27	115	-3	103
Ղրղզստան	115	+1	132	-20	101	-24	122	-16	114

ԱՊՅ երկրների շրջանում ցանցային պատրաստվածության ցուցանիշով Հայաստանը ընդգրկվել է ամենաբարձր աճ գրանցած եռյակի թվում՝ թեև շարունակում է զիջել երկրների մեծ մասին: Նշված համադրելի երկրների շարքում ընդհանուր ցուցանիշի դրական տեղաշարժ են արձանագրել գրեթե բոլոր երկրները՝ բացառությամբ Տաջիկստանի: Առավել էական բարելավում է արձանագրվել հատկապես Ռուսաստանում: Հարևան Վրաստանն ու Ադրբեջանը նույնպես բարելավել են իրենց դիրքերը և շարունակում են Հայաստանից առաջ գտնվել (համապատասխանաբար 6 և 39 հորիզոնականով), թեև Վրաստանի հետ տարբերությունը կրճատվել է:

ՀՏՖ-ի գնահատականներով Հայաստանի ՏՀՏ ոլորտում առավել ուշագրավ առավելություններն ու թերություններն են.

Ամենաեական առավելությունները	Տեղ	Ամենաեական թերությունները	Տեղ
Ձեռնարկության հիմնման գործընթացներ, քանակ	8	Տեղական մրցակցության ինտենսիվություն	139
Չափահաս բնակչության գրագիտության մակարդակ, %	10	Պայմանագրերի կիրարկում, գործընթացների թիվ	133
Բջջային հեռախոսակապի սակագներ	31	Կառավարման դպրոցների որակը	131
Ձեռնարկության հիմնման տևողություն, օր	33	Էլ.- մասնակցության ցուցիչ	117
Բջջային կապի բաժանորդագրություն	33	Ընկերությունների կողմից տեխնոլոգիաների յուրացում	114
Բարձրագույն կրթության ներգրավվածության ցուցանիշ	46	Բիզնեսի կողմից ինտերնետի կիրառում	113

Ընդհանուր առմամբ, Հայաստանի դիրքերը համահունչ են ցածրից միջին եկամուտներ ունեցող երկրների արդյունքներին, բացառությամբ անհատների օգտագործման և հմտությունների հենասյուների, որտեղ Հայաստանը առավել բարձր դիրքեր ունի այդ երկրների խմբի համեմատ:

Հայաստանը հիմնականում բարելավել է դիրքերն անհատների օգտագործման հենասյունով, մասնավորապես բջջային կապի բաժանորդագրությամբ:

Գործարար ոլորտի գնահատականն այս բնագավառում ավելի հետ է անհատներից: Մասնավորապես, ինտերնետի և բջջային կապի օգտագործման, ինչպես նաև տեխնոլոգիական հագեցվածության մակարդակով Հայաստանյան ընկերությունները զիջում են:

Երկրի հիմնական ուժեղ կողմերից են նաև ձեռնարկությունների գրանցման հետ կապված հիմնական գործընթացների դյուրինությունը, ինչն ապահովում է ոլորտի զարգացման ենթակառուցվածքային գնահատականների բարձրացումը: Բացի այդ, հեռահաղորդակցության ոլորտի ինտենսիվ մրցակցությամբ պայմանավորված արագընթաց զարգացումները խթանեցին Հայաստանի մրցունակությունն այս բնագավառում:

Ամենախնդրահարույց ոլորտներից են քաղաքականության և կարգավորման միջավայրը, ՏՀՏ-ների օգտագործման սոցիալական ազդեցությունը, բիզնեսի կողմից օգտագործումը և մատչելիությունը:

Ցանցային պատրաստվածության ցուցիչի բաղադրիչները և Հայաստանի գնահատականը ներկայացված են ստորև.

		Վարկանիշ	Միավոր
1. Միջավայրի բաղադրիչ		110	3.4
Ջենասյուն 1.	Քաղաքական և կարգավորիչ միջավայր	112	3.1
Ջենասյուն 2.	Գործարար և նորարարական միջավայր	93	3.8
2. Պատրաստվածության բաղադրիչ		90	4.3
Ջենասյուն 3.	Ենթակառուցվածք և թվային բովանդակություն	85	3.5
Ջենասյուն 4.	Մատչելիություն	97	4.2
Ջենասյուն 5.	Հմտություններ	62	5.1
3. Օգտագործման բաղադրիչ		89	3.2
Ջենասյուն 6.	Անհատների օգտագործում	75	3.0
Ջենասյուն 7.	Բիզնեսի օգտագործում	104	3.2
Ջենասյուն 8.	Պետական օգտագործում	95	3.5
4. Ազդեցության բաղադրիչ		99	3.0
Ջենասյուն 9.	Տնտեսական ազդեցություն	90	3.0
Ջենասյուն 10.	Սոցիալական ազդեցություն	106	3.1

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը հանդիսանում է «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հետազոտական թևը:

Կենտրոնի մասնագիտացումը ներառում է տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրներից մինչև բիզնես զարգացման անհատական հիմնախնդիրներ: Կենտրոնն ուսումնասիրում է տնտեսության և հասարակության զանազան ոլորտներ՝ հարցումների, ֆոկուսային խմբերի քննարկումների, վերլուծությունների, առաջնային և երկրորդային հետազոտությունների միջոցով:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը Համաշխարհային տնտեսական ֆորումի Համաշխարհային մրցունակության կենտրոնի գործընկեր կազմակերպությունն է Հայաստանում:

«Ի-Վի Քոնսալթինգը» գործարար խորհրդատվական ընկերություն է, որն աջակցում է մրցունակության և նորարարության հաջորդ՝ ավելի բարձր մակարդակի ձգտող կազմակերպություններին:

Հովսեփ Էմիկի 123
Երևան 0051
Հեռ. +37410 219740
Էլ-փոստ. info@ev.am
www.ev.am
www.evconsulting.am